

Կ. ՊՕԼՍՈՅ ՊԱՅՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԳԵՐ. ՍԻՄԷՕՆ ԵՊԻՍԿՈ-  
ՊՈՍԻ ՇՐՋԱՐԵՐԱԿԱՆԸ ՀՈՌՎՄԱՅ ՊԱՊԻ ԿՈՆԴԱԿԻ ԱՌԹԻՒՒՒ,

Գերաշնորհ Առաջնորդաց, հոգեղջօն վանահարց, շնորհա-  
գորդ փորձաց, հոգեշնորհ ֆահանայից և համօրէն դասու-  
օրշեհալ ժողովրդականաց, բնակիչոց ընդ բարեխնամ հովան-  
եաւ մեծազօր Կոյսերութեանն Օսմանեան, արամաց և կառնաց,  
ծերոց և տղայոց, և ամենայն չափու հասակի ի Գրիստոս Յի-  
սուս ի Տէր մեր հաւատացելոց որդւոց լուսոյ Կաթողիկէ և Ա-  
ռաքելական Ս. Եկեղեցւոյ Հայաստանեայց Ողջոյն, Աէր և  
խողազութիւն:

Այս օրերս Պապական Հայոց Պատրիարք Ազարեան Գերապայ-  
ծառն՝ Հռովմայ Պապէն՝ իրեն և Պապական եկեղեցականաց ու  
հաստիքաւորութեան ուղղեալ կոնդակ մը՝ բաժնէր է Հայաստան-  
եայց Ս. Եկեղեցւոյ որդւոց ոմանց մայրաքաղաքին մէջ, իրա-  
նամբ թէ գաւառները ևս ղրկած է:

Ուստի ըստ որոշման Կեզր. վարչութեան Երօնական ժողովոյ  
կրփութեամբ Շրջաբերականաւ ազգ առնել մ'ը Սրբազան պաշ-  
տօնակցաց, որ զգուշացնեն Հայաստանեայց Առաքելական Ս.  
Եկեղեցւոյ հարազատ որդիքն նոյն կոնդակի մէջ պարունակեալ  
շինծու պատմութիւններէն և պատրողական խոսնողմներէն,  
զորս իբրեւ հնարք ի գործ դրած է մոլորեցնելու միամիտները և  
յափշտակելու իրենց մայրենի Եկեղեցւոյ ծոցէն:

Եկեղեցւոյ բեմէն և առանին բացատրեցէք մեր Եկեղեցւոյ  
որրութիւնն և անկախութիւնը, բացատրեցէք թէ մեր Ս. Լու-  
սաւորչին Հռովմ գնալով\*) ոչ Ս. Սեդեքատրոսէն Կաթողիկոսու-  
թիւն առեր, և ոչ Հռովմայեկեղեցւոյն կամ Պապին հպատակերէ:

Բացատրեցէք, թէ մեր Եկեղեցին հիմնեալ է ի ձեռն Սրբազան  
Առաքելոց Թադէոսի և Բարթողիմէոսի, և է ԱՌԹՔԵՆԼԱԿԱՆ  
ԿԱԹՈՂԻԿԷ, ՍՈՒՐԲ Եկեղեցի, անկախ ու է եկեղեցիէ և եկե-  
ղեյապետութենէ, ունենալով Առաքելոց, և Լուսաւորչին յա-  
ջորդութեամբ Եպիսկոպոսութեաւ և Պատուական Հայրապետ ա-  
մենայն Հայոց, որ է Սրբազնակառապ. Կաթողիկոս Ս. Եջմիածնի:

Բացատրեցէք, թէ՛ մեր Սրբազան Կաթողիկոսներէն և ոչ մէկն  
եղած է հպատակ Հռովմայ Պապին, թէ՛ ոչ երբեք բարիք տեսած  
է Պապերէն մեր Եկեղեցին. թէ՛ ընդհակառակն որչափ կորուստ

\*) Եւ ոչ իսկ Հռովմ գնացած.

և ինչ վատնզներ հառուցած է պապականութիւնն Հայ ազգին։  
 Բացատրեցէք, թէ՛ Հայաստանեայց եկեղեցին լրիւ ունի իւր  
 որդւոց հոգւոց փրկութեան միջոցները։ Եւ ընտել կարօսւ չէ  
 Հռովմայ Պապին միջնորդութեան։  
 Բացատրեցէք, թէ՛ ինչպէս Պապն պապական Հայոց ժամու-  
 գրքէն վերցուցեր է մեր Սպարապետուած իւր խառններ է Ս. Լուսաւորչէն մեղ աւանդեալ Նիկիական Հաւա-  
 սալքն։ սղալեր է Ս. Ներսէս Ենորհաւայն։ Աւաւօտ լուսոյ  
 և այլ երգերը։ Բղիսու մն ի Հօրէն ի կցելով և յորդւոյ։ Թէ  
 ինչպէս Ս. Պատարագի աղօթից, և քարոզից յիշատակութե-  
 նէն հաներ է Եպիսկոպոսապետին մերոյ և պատուական հայրու-  
 պեանն ամենայն Հայոց Ս. Կաթողիկոսին անունը, և աւոր տեղը  
 գրեր է իւր (Հռովմայ քահանայապետին) անունը, թէ՛ ինչպէս  
 Ս. Պատարագի անապակ Բաժակին մէջ ջուր խառնէր է, և նոյն  
 և նոյն զոր չեն ըրած երբէք, ոչ Աւաղեալք, ոչ Լուսաւորիչ, և ոչ  
 ուր ի սրբազան Հորցն Նախնեաց։

Բացատրեցէք, թէ՛ Ունիթիոններու ձեռքով, թէ՛ Կիլիկեցւոց  
 յարաբերութեամբ ինչ ծանր ծանր վտանգներ կրած է մեր  
 Ազգն Պապերու երեսէն։ Արաասուելով յիշեցէք Լեհաստանի  
 քառասուն հազար տունէն աւելի ընտիր ընտիր Հայոց կո-  
 րուսան, զորս իւր եկեղեցին ուրացող Նիկիոյ Հայ Պապական Ե-  
 պիսկոպոսի մը ձեռքով, անագորոյն հնաբնեւով կորելով իրենց  
 մայր եկեղեցիէն տարաւ ի փարախ Հռովմայ, որոյ խնամացեր  
 էր որպէս այժմ կը խոստանայ, ժամոհմակին Պապութիւնը,  
 պտտուով պահելու Հայոց ծէսն, լեզուն, մատենք, և այլն։  
 այլ ուսն, անհետացաւ այն ումենայն և իրեաւ պնդան լրի-  
 րաւոր Հայոց յիշատակի և սերնդեան հետ։

Բացատրեցէք, թէ՛ ինչ է եղեր Պապին մեր Ազգին վրայ ունե-  
 ցած հոգն ու խնամքը։ Հայոց համար փարժարան կը ըսնայ չը-  
 ուովմայ մէջ, Հայ—Պապական եպիսկոպոս մը կը նստեցնէ հոն  
 և այլն. ասոնք որդայթ են որսողին։ Թէ՛ ինչպէս միւս նոյն  
 ժամանակ յանուն իսաղաղութեան խռովութիւն, և յանուն  
 միութեան երկարաւակութիւն կը յարուցանէ Հայոց մէջ որ-  
 պէս զի գիւրանան իրեն բառնալու Հայոց հայրապետութիւնը,  
 կործանելու Լուսաւորչին աթոռը, ջնջել մեր լեզուն, ծէսն և  
 մատենքը, և ամենայն ինչ որ ազգային է մեր նախնեաց ճգնու-

թեան, սրբութեան և նահատակութեան վկայարանները քարուքանդ առնել, մեր վանքեր ու եկեղեցիները Ազգի ձեռքէն հանել, և աւերել շիրմներու յիշատակարաններն, որը շինուած և շաղախուած են արեամբ և հոգևով մեր երանեալ սուրբ Հարց, Բացատրեցէք, զգուշացուցէք մանաւանդ հաւատարիմ Հայ աղբ՝ Հռովմայ Պապին անհաւատարիմ խոտմանէն, որով կը փորձէ տալ մեզ բարօրութիւն և աշխարհային բարիք, պայման գնելով որ լինինք Պապական, զոր կը մերժեմք յամենայն սրտէ յամենայն մտաց. մենք ունիմք Աստուած, զԱստուած հարցն մերոց յերկինս, յորմէ միայն կականկալենք փրկութիւն. ունիմք տէր, թաղաւոր յերկրի բարեխնամ՝ Օսմանեան Պետութիւն յորմէ միայն կականկալենք աշխարհային կենաց բարիք և բարօրութիւն, ինչպէս որ վայելած ենք դարերէ ի վեր, և կը վայելենք, և կ'օրհնենք զնա:

Յորդոր կարգացէք մեր սիրելի ժողովրդեան, թէ՛ պէտք է Հայքս պինդ և աներկիւզ մնանք պահելով մեր նախնեաց մեզ աւանդեալ հաւատքը, ծէսն, լեզուն, մատենանք, վարդապետութիւն, աւանդութիւն, վանօրայք, տաճարք, վկայարանք, գերեզմանք, սրբութիւնք, և փարեալ մնանք մեր Հայաստանեայցս առաջին լուսաւորչաց Քաղէոսի և Բարթուղիմէոսի Սրբազան Առաքելոց, Սուրբ Էջմիածնին, Աթոռոյն Սուրբ Լուսաւորչին. սիրենք ապրիլ և մեռնիլ մեր եկեղեցւոյ գիրկը, որ մեր կեանքն է եղած:

Բարեխօս ունելով զՍուրբ Մարիամ՝ զԱստուածածին զՓառուորեալ և զամենօրհնեալ միշտ Կոյսն, և զՍուրբ Կարապետն Յովհաննէս, զառաջին լուսաւորիչս Հայաստանեայցս՝ զՔաղէոս և զԲարթուղիմէոս Սրբազան Առաքեալս և զառաքելաշուիղ յաջորդ նոցին, զմեծ խոստովանողն Քրիստոսի զպատուական Հայրապետն մեր զՏէր Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ զՀայրն մեր առ Քրիստոս Աստուած մեր, զի զեկեղեցիս Հայաստանեայց և զմնացորդս ժողովրդեան նորա պահեսցէ ի խաղտութեան փրկելով յերևելի և յաներևոյթ թշնամեաց, և զհեռացեալ որդիս նորա, զեղբարսն մեր դարձուցէ վերստին ի ժառանգութիւն հարցն իւրեանց, ժողովելով ի յարկս մայրենի սեպհական տան, միացուցանել ընդ երամս իւրեանց, առնել մի հօտ, մի հովիւ, ի փառս Ամենասուրբ Նրբորդութեան, որ է օրհնեալ յաւիտեանս Ամէն:

Մնած ազնաբար

Ի ՊԱՅՏԻԱՐԺԱՐԵՆԻ ՀԱՅՈՑ

26 օգոստոս, 1888.

ՊԱՅՏԻԱՐԺԱՐԵՆԻ ՏԵՂԱՊԱՀ